աշակերտ նորին Ս. Եղիշէ դառնայ յԵրուսաղէմ, եւ ձեռնադրի Եպիսկոպոս 'ի Յակոբայ Տեառն եղբօրէ, եւ դառնայ 'ի գաւառն Ուտի։ Մովս. Կաղանկ. Հատ. Ա. 94։

Գտանի և 'ի ձեռագիրս Թուղթ ինչ մակագրեալ յանուն սոյն այս Յակոբայ, զորոյ զպատճէնն դնեմք աստանօր։

Թուղթ՝ զոր առաքեաց Յակոբոս եպիսկոպոս Երուսաղէմի առ Կոդրատոս. զի ցուցցէ նմա թէ զինչ հրաման ետ Տիբեր կայսր վասն Հրէից, որ 'ի խաչ հանին ըզ-Քրիստոս։

Յակոբոս եպիսկոպոս Երուսաղէմի, առ Կոդրատոս անուանդ բարի եւ աշակերտ հաւատացեալ 'ի Տէր ողջոյն։ Լուայ ես եւ ուրախ եղէ թէ քանի փոյթ ունիս վասն քարոզութեան Աւետարանին Քրիստոսի. թէ ո՞րպէս խընդութեամբ ընդունիս զայնոսիկ՝ որք կան 'ի ստութեան և 'ի ճշմարտութեան, եւ մաքառիս ընդդէմ Հրէից և Հեթանոսաց, և ցուցանես խաչահանուացն 'ի գրոց վկայութիւն վասն տեառն մերոյ. եւ զոր օրինակ 'ի ժամանակի իբրեւ առնէր տէր մեր զնշանս եւ զսքանչելիս, կային ընդդէմ նորա եւ ոչ հաւատային, սոյնպէս եւ այս օրինակ ընդդէմ մեր հակառակութիւն ուրացողութեան իւրեանց։ Բայց այժմ զի յայտնի եղեւ նենգութիւն նոցա առաջի Պիղատոսի դատաւորի եւ խոստովան եղեն Աննա եւ Կայիափա եւ Բենիամին եւ Նախմայել գլխաւորք ժողովրդեան իւրեանց, թէ որպէս եառուն կաշառս պահապանացն, որ պահէին զԳերեզման Տեառն մերոյ հանդերձ Արիստիտեսիւ և Անատոլսիւ, զի թողցեն զոր ինչ տեսինն. Նա և ինքեանք իսկ պահապանքն խոստովանեցան զայս թէ արդարեւ առին կաշառս զի մի' ասիցեն թէ յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց, և իբրեւ 'ի վերայ եհաս Պիղատոս ճշմարտութեամբ բանիցս այսոցիկ, հրաման ետ զի արգելցեն զդահիճսն 'ի բանդ։

Եւ քանզի հազարապետ էր Պիղատոս, կայսեր գրեաց և եցոյց նմա զամենայն զոր գործեցին Հրէայքն 'ի դատաստան ընդ Տէրն մեր, զի կասկածէր նա յոյժ յայնմ բանէ զոր լուաւ 'ի նոցանէ. Յիսուս այն' ասեն Թագաւոր է Հրէից։ Եւ ոչ գիտէին Հրէայքն թէ զինչ հրաման տացէ